ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/119

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12059-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.07.2019թ. թիվ ՊՆ/02/1188-2019 գրության հիման վրա, 18.07.2019թ. «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 19.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 26.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.07.2019թ. թիվ ՊՆ/02/1188-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 26-րդ չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչվեց Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը, որին անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացվեց պայմանագրի նախագիծը և առաջարկվեց կնքել պայմանագիր: Սակայն Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից 28.06.2019թ. ներկայացվեց գրություն առ այն, որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանն առողջական վատ վիճակի պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Քննարկելով Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից ներկայացված գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 26-րդ չափաբաժնի մասով մերժել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի հայտը և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 7.16 կետը՝ վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները կից ներկայացրել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.07.2019թ. գրությամբ դիմել է «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.07.2019թ. թիվ 26/26-1/12059-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/119 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 26-րդ չափաբաժնի մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին և վերջինիս 18.06.2019թ.-ին www.armeps.am էլեկտրոնային

համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ներկայացվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Մասնակիցը՝ 28.06.2019թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցելով ՀՀ ՊՆ կողմից կազմակերպած թիվ ԳՀԱՊՁԲ-10/19 և թիվ ԳՀԱՊՁԲ-10/20 մրցույթներին, համարվել է ընտրված մասնակից: Ստանալով պայմանագրի մասին բոլոր ծանուցումները, առողջական վատ վիճակի պատճառով՝ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12059-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 26-րդ չափաբաժնի մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին:

Մասնակցին 18.06.2019թ.-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ներկայացվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12059-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**